Armenian Copper Programme

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊՐՆ Դ.ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ

ք. Ալավերդի, 10.01.2024թ.
Ելք № ՍԿ-002

Հարգելի պարոն Ղումաշյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությունը (պետական գրանցման համարը՝ 12.120.00448, պետական գրանցման օրը՝ 09.08.1997թ., ՀՎՀՀ՝ 06605968, իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, 3-րդ միկրոշրջան, շենք 14, բնակարան 39, փոստային հասցեն /փաստացի գտնվելու վայրը/՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց 4) (այսուհետ նաև՝ Ընկերություն)՝ որպես նախաձեռնող, մտադիր է ավելացնել Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտադրական տարածքներում ու դրա հենքի վրա իրականացվող արտադրական գործունեության ծավալներն ու թողարկվող ապրանքատեսակների արտադրությունը, որի համար ներկայում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում են համապատասխան փաստաթղթերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Նախաձեռնողը, որը մտադիր է իրականացնել սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեություն համայնքում, որի վարչական սահմաններում իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, համայնքի ղեկավարին է ներկայացնում ծանուցում, որը ներառում է՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.

3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

2. Համայնքի ղեկավարը ծանուցումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է շահագրգիռ հանրության ծանուցում և ծանուցումից հետո՝ ոչ շուտ, քան 21-րդ և ոչ ուշ, քան 25-րդ աշխատանքային օրն իրականացնում է հանրային լսում ազդակիր բնակավայրում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ավագանին որոշում է ընդունում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների մասին:

4. Համայնքի ղեկավարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված համայնքի ավագանու որոշման կայացման օրվանից հետո՝ 5-օրյա ժամկետում, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված դեպքում համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, լիազոր մարմնին և նախաձեռնողին է տրամադրում համայնքի ավագանու որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունները, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:»:

Հաշվի առնելով, որ Ընկերության կողմից նախատեսվող գործունեության տեսակները ներառված են Օրենքի 12-րդ հոդվածով 3-րդ մասով սահմանված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակների «Ա» կատեգորիային դասվող ցանկում, որոնց իրականացման համար Օրենքով, ի թիվս այլնի, պահանջվում է նաև տեղական ինքնակառավարման մարմնի նախնական համաձայնության տրամադրումը, խնդրում ենք սույն նամակը համարել նախաձեռնողի կողմից Ձեզ (համայնքի ղեկավարին) ներկայացվող՝ նախատեսվող գործունեության իրականացման մասին ծանուցում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով և կատարել շահագրգիռ հանրության ծանուցում ու ազդակիր բնակավայրում իրականացնել հանրային լսում՝ ապահովելով Օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանումը: Այդ նպատակով հայտնում ենք հետևյալը՝

1. *Նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.*

   Անվանումը՝ **«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերություն (պետական գրանցման համարը՝ 12.120.00448, պետական գրանցման օրը՝ 09.08.1997թ., ՀՎՀՀ՝ 06605968).**

   Իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, 3-րդ միկրոշրջան, շենք 14, բնակարան 39.

   Փաստացի գտնվելու վայրը՝ **Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց 4:**

   Էլեկտրոնային փոստի հասցեն՝ **s_karapetyan@acp.am**

2. *Նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.*

   Նախատեսվող գործունեության տեսակների անվանումները՝

   Սույն ծանուցմամբ Նախաձեռնողը հայտարարում է Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտադրական տարածքներում գունավոր մետաղներ (առաջին հերթին՝ պղնձ) պարունակող հումքի (լեռնային զանգվածի, ապարների և/կամ առաջնային հանքաքարի) մետալուրգիական վերամշակման տեխնոլոգիաների կիրառմամբ հետևյալ տեսակներով գործունեություն իրականացնելու իր ծրագրերի մասին, որոնք բոլորը դասվում են Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակների **«Ա» կատեգորիայի 5-րդ՝ «մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում»** կետի **«բ»** ենթակետին՝

   1) Պղնձակիր հումքի (այդ թվում՝ պղինձ պարունակող հին լցակույտերի լեռնային զանգվածների, պղինձ պարունակող ապարների և /կամ առաջնային հան-

քաքարի, պղինձ պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում գոյացած խարամի) վերամշակում ֆլոտացիոն եղանակով՝ տարեկան մինչև 100 հազար տոննա արտադրողականությամբ.

2) Պղնձակիր հումքի (այդ թվում՝ պղնձի խտանյութերի, պղնձի հանքաքարի, պղինձ պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում գոյացած խարամի) տարրալվացում APL (Atmospheric Polymineral Leaching) տեխնոլոգիայով, տարեկան 2,000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ).

3) Տարեկան 2,000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ) կատոդային պղնձի արտադրություն SX-EW (Solvent Extraction-Electrowinning) տեխնոլոգիայով.

4) Տարեկան 2,000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ) պղնձի փոշու արտադրություն ցեմենտացիոն մեթոդով.

5) Պղնձե գլոցուկի արտադրություն՝ տարեկան 1,000 տոննա, 8մմ և (կամ) 13մմ տրամաչափով գլոցուկների թողարկման արտադրողականությամբ.

6) Պղնձե խողովակների արտադրություն՝ տարեկան 1,000 տոննա արտադրողականությամբ.

7) Պղնձե փայլաթիթեղի արտադրություն՝ 9-100 միկրոմետր հաստությամբ և տարեկան 200 տոննա արտադրողականությամբ.

8) Պղնձարջասպի արտադրություն՝ պղնձի ջարդոնի կամ պղնձի սուլֆատի լուծույթի խածատմամբ.

9) Ցեմենտացիոն պղնձի լուծույթներից երկաթարջասպի արտադրություն՝ տարեկան մինչև 10,000 տոննա արտադրողականությամբ.

10) Գունավոր մետաղների համաձուլվածքների արտադրություն.

11) Մետաղափոշիների հիմքով ներկերի արտադրություն.

12) Ցածր ջերմաստիճանային զոդանյութերի արտադրություն:

Նախատեսվող գործունեության նպատակը՝ Նախատեսվող գործունեության նպատակը ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական սահմաններում գտնվող պղնձաձուլական գործարանի արտադրական տարածքներում ու դրա հենքի վրա իրականացվող արտադրական գործունեության ու թողարկվող ապրանքների տեսակների ու դրանց ծավալների ավելացումն է՝ համապատասխան աշխատատեղերի ստեղծումով:

Մասնավորապես, նախատեսվող գործունեության նպատակ է հանդիսանում գունավոր մետաղներ (առաջին հերթին՝ պղնձ) պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում համապատասխան քանակներով պղնձի

խտանյութի, կատոդային պղնձի, պղնձարջասպի, երկաթի արջասպի, պղնձի փոշու, գլոցուկի, պղնձե խողովակների, փայլաթիթեղի, տարբեր բաղադրության համաձուլվածքների, ալկիդային ներկերի ու պղնձալարի արտադրությունը:

Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը՝ տե՛ս Ալավերդու պղնձաձուլական գործարանի տարածքում նոր (նախատեսվող) արտադրական գործունեության տեսակների համառոտ նկարագիրը, որը կցվում է սույն ծանուցմանը:

3. *Նախատեսվող գործունեության իրականացման վայրը* –

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց (նախկին՝ Կիրովի փողոց) 4 հասցեով գտնվող՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտադրական տարածք:

Առդիր՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանի տարածքում նոր (նախատեսվող) արտադրական գործունեության տեսակների համառոտ նկարագիր՝ 32 թերթ:

Հարգանքով՝

Տնօրեն Սահակ Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՓԸՐ ՓՐՈԳՐԱՄ ՓԲԸ
ARMENIAN COPPER PROGRAMME CJSC
ACP
06605968
ԱԼԱՎԵՐԴԻ ՊՂՆՁԱՁՈՒԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
ALAVERDI "ARMENIAN COPPER PROGRAMME" CJSC
2

Signed by KARAPETYAN SAHAK
3207740189
Հավաստված է ՊԿԵՆԸ-ի կողմից